



Կադաստրի
կոմիտե

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե
www.cadastre.am


ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցված անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների գնային և քանակական վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է Երևան քաղաքում ըստ վարչական շրջանների և մարզերում ըստ քաղաքների:

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հանրապետությունում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացվել է 3,608 առուվաճառքի իրավունքի պետական գրանցման գործարք, որից՝ 619 առուվաճառքի գործարք արձանագրվել է Երևան քաղաքում:

Գծապատկեր 1-ում ներկայացված է 2023-2024 թվականների առաջին կիսամյակների ընթացքում Երևան քաղաքում անհատական բնակելի տների իրականացված առուվաճառքի գործարքների քանակները:

Գծապատկեր 1



Աղյուսակ 1-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անհատական բնակելի տների իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը՝ 2023 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ:


Վարչական շրջան	2024 թվականի առաջին կիսամյակ	Կիսամյակային դինամիկա	2023 թվականի առաջին կիսամյակ
Դավթաշեն	24	9.1%	22
Էրեբունի	107	0.9%	106
Աջափնյակ	52	-14.8%	61
Ավան	25	-24.2%	33
Արարկիր	78	-31.6%	114
Կենտրոն	89	-14.4%	104
Մալաթիա-Սեբաստիա	63	1.6%	62
Քանաքեռ-Զեյթուն	32	-20.0%	40
Շենգավիթ	98	-9.3%	108
Նոր Նորք	20	-20.0%	25
Նորք-Մարաշ	23	-58.2%	55
Նուբարաշեն	8	-11.1%	9
Երևան	619	-16.2%	739

Երևան քաղաքում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների իրականացված առուվաճառքի գործարքների առավել բարձր քանակը՝ 107 գրանցվել է Էրեբունի, իսկ առավել ցածրը՝ 8 Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 2-ում ներկայացված է Երևան քաղաքում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.

Գծապատկեր 2


2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների բաշխվածությունն՝ ըստ ամիսների



2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների առավել բարձր քանակ գրանցվել է 2024 թվականի ապրիլ ամսին, իսկ առավել ցածրը՝ հունվար ամսին:

Գծապատկեր 3-ում և աղյուսակ 2-ում ներկայացված է Երևան քաղաքում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների գույքային միավորների քանակը և տոկոսային բաշխվածությունն՝ ըստ շինության մակերեսների.

Գծապատկեր 3



Աղյուսակ 2

Վարչական շրջան	25-75 քմ	75-180 քմ	180-250 քմ	250-350 քմ	350 քմ և ավելի
Կենտրոն	44	26	5	4	10
Արաբկիր	15	31	11	8	13
Քանաքեռ-Զեյթուն	8	9	8	4	3
Նոր-Նորք	3	4	4	6	3
Էրեբունի	24	56	18	5	4
Շենգավիթ	41	38	15	3	1
Դավթաշեն	8	6	4	4	2
Աջափնյակ	12	20	4	10	6
Մալաթիա-Սեբաստիա	13	34	4	8	4
Ավան	5	4	4	8	4
Նորք-Մարաշ	9	4	5	-	5
Նուբարաշեն	3	4	-	-	1
Ընդամենը	185	236	82	60	56


Ստորև աղյուսակ 3-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Երևան քաղաքում անհատական բնակելի տների նկատմամբ գրանցված առուվաճառքի պայմանագրային գների հիման վրա 1 քմ մակերեսի հաշվարկով նվազագույն և առավելագույն գնային սահմանները.

Աղյուսակ 3

Վարչական շրջան	1 քմ պայմանագրային գների գնային սահմաններ (ՀՀ դրամ)	
	Նվազագույն	Առավելագույն
Աջափնյակ	158,950	1,300,000
Ավան	207,100	646,000
Արաբկիր	326,500	1,800,200
Դավթաշեն	290,600	814,000
Էրեբունի	153,800	610,000
Կենտրոն	466,500	3,445,100
Մալաթիա-Սեբաստիա	145,200	600,00
Նորք-Մարաշ	190,500	1,265,900
Շենգավիթ	129,900	471,800
Քանաքեռ-Զեյթուն	168,539	1,214,000
Նոր Նորք	189,000	476,500
Նուբարաշեն	134,000	333,150

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ մարզերում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացվել է 2,989 առուվաճառքի իրավունքների պետական գրանցման գործարք:

Գծապատկեր 4-ում ներկայացված է 2023-2024 թվականների կիսամյակային կտրվածքով ՀՀ մարզերում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների քանակները.



Աղյուսակ 4-ում ներկայացված է 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ մարզերում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունն՝ 2023 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ.


Աղյուսակ 4

Մարզ	2024 թվականի առաջին կիսամյակ	Կիսամյակային դինամիկա	2023 թվականի առաջին կիսամյակ
Արագածոտն	226	13.0%	200
Արարատ	506	-3.3%	523
Արմավիր	425	-3.4%	440
Գեղարքունիք	186	23.2%	151
Լոռի	292	11.9%	261
Կոտայք	648	-12.3%	739
Շիրակ	257	3.2%	249
Սյունիք	188	9.9%	171
Վայոց ձոր	71	12.7%	63
Տավուշ	190	0.0%	190
Ընդամենը	2,989	0.1%	2,987

ՀՀ մարզերում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների առավել բարձր քանակ՝ 648 միավոր, գրանցել ենք Կոտայքի մարզում, իսկ առավել ցածր՝ 71 միավոր, Վայոց Ձորի մարզում:

Գծապատկեր 5-ում ներկայացված է ՀՀ մարզերում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն՝ ըստ ամիսների.


Գծապատկեր 5



ՀՀ մարզերում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքների առավել բարձր քանակը՝ գրանցել ենք 2024 թվականի ապրիլ ամսին, իսկ առավել ցածրը՝ հունվար ամսին:

Գծապատկեր 6-ում և աղյուսակ 5-ում ներկայացված է ՀՀ մարզերում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների գույքային միավորների քանակը և տոկոսային բաշխվածությունն՝ ըստ շինության մակերեսների.

2024թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ մարզերում անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների բաշխվածությունն՝ ըստ շինության մակերեսների




Աղյուսակ 5

2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ մարզերում անհատական բնակելի տների նկատմամբ գրանցված գույքային միավորների քանակն՝ ըստ շինության մակերեսների


Մարզ	25-75 քմ	75-180 քմ	180-250 քմ	250-350 քմ	350 քմ և ավելի
Արագածոտն	47	80	42	40	17
Արարատ	158	191	77	45	35
Արմավիր	71	167	83	62	42
Գեղարքունիք	18	66	53	33	16
Լոռի	64	132	53	33	10
Կոտայք	196	226	113	67	46
Շիրակ	63	112	40	24	18
Սյունիք	52	65	37	25	9
Վայոց ձոր	10	25	19	15	2
Տավուշ	58	77	24	19	12
Ընդամենը	737	1141	541	363	207

Ստորև ներկայացված է ՀՀ մարզերում 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անհատական բնակելի տների նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունն՝ ըստ քաղաքների և գյուղական համայնքների.


Արագածոտնի մարզ




Արարատի մարզ




Արմավիրի մարզ




Գեղարքունիքի մարզ




Լոռու մարզ




Կոտայքի մարզ




Շիրակ մարզ




Սյունիքի մարզ



Վայոց Ձորի մարզ



Տավուշի մարզ



Աղյուսակ 6-ում ներկայացված են 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ մարզերի առավել ակտիվ քաղաքներում անհատական բնակելի տների նկատմամբ գրանցված առուվաճառքի պայմանագրային գների հիման վրա 1 քմ մակերեսի հաշվարկով նվազագույն և առավելագույն գնային սահմանները:

Աղյուսակ 6

Մարզ	Քաղաք	2023 թվական գնային սահմաններ
Արագածոտն	Աշտարակ	150,000-300,000
	Ապարան	100,000-180,000
Արարատ	Արտաշատ	160,000-220,000
	Մասիս	180,000-250,000
	Վեդի	80,000-150,000
	Արարատ	100,000-180,000
Արմավիր	Վաղարշապատ	200,000-300,000
	Արմավիր	160,000-250,000
Գեղարքունիք	Սևան	100,000-180,000
	Մարտունի	120,000-180,000
	Վարդենիս	70,000-120,000
	Ճամբարակ	50,000-100,000
Լոռի	Վանաձոր	120,000-250,000
	Ստեփանավան	80,000-160,000
	Սպիտակ	100,000-220,000
	Տաշիր	55,000-100,000
Կոտայք	Արովյան	250,000-350,000
	Նոր Հաճն	150,000-250,000
	Եղվարդ	190,000-280,000
	Հրազդան	130,000-200,000
	Ծաղկաձոր	300,000-500,000
	Չարենցավան	160,000-250,000
Շիրակ	Գյումրի	160,000-250,000
Սյունիք	Գորիս	120,000-220,000
	Կապան	150,000-250,000
	Սիսիան	90,000-180,000
	Մեղրի	120,000-220,000
Վայոց ձոր	Վայք	120,000-220,000
	Եղեգնաձոր	100,000-200,000
Տավուշ	Դիլիջան	220,000-350,000
	Իջևան	80,000-200,000
	Նոյեմբերյան	65,000-150,000

Կադասարի
Կոմիտե

